ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԲԻԶՆԵՍԻ ՀԱՐԿԱՅԻՆ ԴԱՇՏԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

2013

ՎԶԵԲ Գործարարության աջակցման գրասենյակի կողմից ՀՀ մարզերում իրականացված հանդիպումների արդյունքների ամփոփում

European Bank
for Reconstruction and Development

Գործարարության աջակցման գրասենյակ-Հայաստան
Ֆինանսավորվում է ՎԶԵԲ-ի Multi-Donor ETC հիմնադրամի կողմից

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՓՄՁ
ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

ՎԶԵԲ Գործարարության աջակցման գրասենյակի փորձագետների և ՓՄՁ ԶԱԿ-ի մարզային գրասենյակի ներկայացուցիչների հետ համատեղ 2013թ-ի հունիս - հուլիս ամիսների ընթացքում տեղի ունեցան ՀՀ մարզային հանդիպումներ ՓՄՁ ֆոկուս խմբերի հետ: Հանդիպումների ընթացքում վերլուծություն կատարվեց սույն թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված հարկի դրույքաչափերի ազդեցությունը ՓՄՁ սուբյեկտների վրա:

Վերլուծությունն իրականացվել է վերջիններիս կողմից լրացված անանուն հարցաթերթիկների, ինչպես նաև դեմ առ դեմ քննարկումների արդյունքների հիման վրա, որոնց ընթացքում բացահայտվեցին «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքի շրջանակներից դուրս այլ խնդիրներ:

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի

Գործարարության աջակցման գրասենյակ

ՀՀ, ք. Երևան 0009, Տերյան 105/1,

Հեռ.՝+374 10 70 33 70;

info@bso.am; www.bso.am;

http://www.facebook.com/BSO.Armenia

Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության

զարգացման ազգային կենտրոն

ՀՀ, 0010, ք.Երևան, Միեր Մկրտչյան 5ա

Հեռ.՝ +374 10 54-16-48

info@smednc.am; www.smednc.am

https://www.facebook.com/SME.DNC.of.Armenia

Ներածություն

2012 թվականի ապրիլին ՓՄՁ զարգացման խորհրդի հերթական նիստում բարձրացվեց ՓՄՁ հարկման դաշտի անկատարության և բարդության վերաբերյալ: ՓՄՁ զարգացման խորհրդի քարտուղարության և ՎԶԵԲ Գործարարության աջակցման գրասենյակի փորձագետների ուժերով մշակվեց նոր հարակտեսակի՝ Շրջանառության հարկի մասին օրենքի նախագիծ: Իսկ 2012թ-ի սեպտեմբեր ամսից ՀՀ ԿԱ ՊԵԿ և Ֆինանսների նախարարության կողմից շրջանառվեց «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքի իրենց կողմից ներկայացված նախագիծը, որը բազմաթիվ քննարկումներից հետո արդեն 2013 թվականի հունվարի 1-ից, ուժի մեջ մտավ այն տեսքով, որով հիմա գործում է: Այսօր այս հարկատեսակը **միակն** է, որը որոշակի հարկման ռեժիմի արտոնություններ է սահմանում ՓՄՁ սուբյեկտների համար, եթե հաշվի չառնենք արտոնագրային վճարների ռեժիմը (այդ ռեժիմից օգտվելու իրավունք ունեն միայն որոշակի տեսակով գործունեություն ծավալողները):

ՀՀ մարզերում ՓՄՁ սուբյեկտների հետ ունեցած հանդիպումների արդյունքում 2013 թվականի 1-ին կիսամյակի վերաբերյալ կատարված վերլուծությունները Շրջանառության հարկի կիրառման մասին ընդհանուր առմամբ ցույց տվեցին, որ.

ՓՄՁ սուբյեկտները գոհ են հարկի գաղափարախոսությունից, քանի որ այլևս ստիպված չեն լինում վարել բարդ հաշվառում և այլևս չհիմնավորված, առանց փաստաթղթերի ձեռքբերումների հետ խնդիրներ չեն ունենում, փոխարենը ներկայացում են պարզ եռամսյակային հաշվետվություններ, իրականացնում են հարկի պարզ հաշվարկ և եռամսյակային վճարում:

Սակայն Շրջանառության հարկը կիրառության մեջ բոլորովին այլ պատկեր է ստեղծել, որին ավելի մանրամասն անդրադարձ կա սույն վերլուծությունում:

Փոքր և միջին ձեռնարկատիրության սահմանումը

«Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի համաձայն ՓՄՁ սուբյեկտները բաժանվում են գերփոքր, փոքր և միջին ձեռնարկատերերի.

- գերփոքր են համարվում մինչև **10 աշխատող** և մինչև **100 մլն ՀՀ դրամ** տարեկան շրջանառություն ունեցող տնտեսվարող սուբյեկտները;
- փոքր են համարվում մինչև **50 աշխատող** և մինչև **500 մլն ՀՀ դրամ** տարեկան շրջանառություն ունեցող տնտեսվարող սուբյեկտները;
- միջին են համարվում մինչև **250 աշխատող** և մինչև **1 500 մլն ՀՀ դրամ** տարեկան շրջանառություն ունեցող տնտեսվարող սուբյեկտները:

Մինչդեռ ՀՀ հարկային օրենսդրության համաձայն ՓՄՁ սուբյեկտները բաժանվում են շրջանառության հարկի դաշտում, որոնք ունեն մինչև **58,35 մլն ՀՀ դրամ** տարեկան շրջանառություն և ընդհանուր հարկման դաշտում գործող հարկ վճարողների,: Սակայն հենց գերփոքր, փոքր կամ միջին ձեռնարկատերերը ոչ մի կերպ չեն հիշատակվում հարկային օրենսդրությունում և հարկային փաստացի արտոնյալ կամ պարզեցված ռեժիմներ ՓՄՁ սուբյեկտների համար սահմանված չեն:

Նման մոտեցումը լուրջ շփոթությունների հիմք է հանդիսանում թե՛ պետական մարմինների ներկայացուցիչների, թե՛ տնտեսվարող սուբյեկտների, թե՛ վերլուծություններ իրականացնողների և թե՛ դրանք ուսումնասիրողների համար: Հետևաբար, *հետագա շփոթություններից խուսափելու և առավել ճկուն հարկային համակարգ ունենալու նպատակով՝ անհրաժեշտ է ՓՄՁ սուբյեկտներին նկարագրող գործող երկու մոտեցումները համապատասխանեցնել իրար:*

Սույն վերլուծության շրջանակներում Գերփոքր հարկատուն կամ տնտեսվարողը այն հարկատուն է, որն ըստ իրենց չափորոշիչների բավարարում է «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի Գերփոքր ձեռնարկատերերի սահմանմանը՝ տարեկան մինչև 100 մլն շրջանառություն և մինչև 10 աշխատող ունեցողներ:

ՓՄՁ սուբյեկտները հարկային համակարգում

Ըստ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի հրապարակած Էլեկտրոնային հաշվետվություններ ներկայացնողների վերաբերյալ տեղեկանքի՝

2013 թվականի 1-ին եռամսյակի արդյունքներով առկա են **78 787** հաշվետվություն ներկայացնող հարկատուներ, իսկ մեկ այլ տեղեկանքի համաձայն ընդհանուր ՓՄՁ սուբյեկտների թիվը կազմում է **73 803** հարկատու: Այսինքն հաշվետվություն ներկայացնող հարկատուների մոտ ***93 տոկոսը***:



Իսկ **գերփոքր** հարկատուներն ըստ 2013թ-ի 1-ին կիսամյակի արդյունքների կազմել են 68873, սա այն հարկատուներն են, որոնց տարեկան շրջանառությունը **չի գերազանցում 100 մլն դրամը** և աշխատողների միջին ցուցակային քանակը չի գերազանցում 10-ը:

Գերփոքր սուբյեկտների կողմից 2013թ-ի 1-ին կիսամյակի արդյունքներով վճարված հարկերը կազմել են մոտ 45.2 մլրդ դրամ, որն ըստ Ֆինանսների նախարարության հրապարակած տեղեկատվության կազմում է ընդհանուր հարկային մուտքերի՝467,7 մլրդ դրամի 9,7 տոկոսը:



Ստորև ներկայացված Գծապատկերում արտացոլված է վերջին տարիների ընթացքում ***Գերփոքր*** հարկատուների քանակային դինամիկան համեմատած վերջիններիս կողմից վճարված հարկերի հետ:



Ստորև ներկայացված Գծապատկերում ընդգծված երևում է Առևտրի ոլորտի քանակային գերակայությունը մյուսների նկատմամբ:



Գյուղատնտեսության ոլորտը ներառում է միայն գյուղմթերք վերամշակող հարկատուներին, քանի որ գյուղմթերք արտադրողները հիմնականում հաշվառված չեն հարկային մարմիններում:

Առևտրի ոլորտում գործունեություն ծավալող հարկատուները կազմում են Գերփոքր հարկատուների մոտ **62** տոկոսը:

Իսկ Գերփոքր հարկատուների տեղաբաշխվածությունն ըստ մարզերի ունի հետևյալ տեսքը՝



Գերփոքր հարկատուների մոտ 50 տոկոսը գործունեություն է ծավալում Երևանում:

Շրջանառության հարկի ազդեցությունն ու խնդիրները:

Ինչպես նշված է սույն վերլուծության Ներածություն բաժնում, ընդհանուր հարկի գաղափարախոսությունից գոհ են ՓՄՁ սուբյեկտները: Դեմ առ դեմ հանդիպումների ՓՄՁ սուբյեկտների ներկայացուցիչները գոհունակություն էին հայտնում, որ այս հարկատեսակը հնարավորություն է տալիս պարզ հաշվառում վարելու, հնարավորինս քիչ հարկային ստուգումներ, ուսումնասիրություններ ունենալու, եռամսյակային պարզ հաշվարկներ ներկայացնելու և հարկեր վճարելու:

Ի սկզբանե այս հարկի մեջ դրված էր մի պարզագույն սկզբունք. այն հարկատուները որոնք վարում են հասույթի ճշգրիտ հաշվառում, չառնչվեին հարկային վերահսկողության արդյունքում ծագող խնդիրների հետ:

Այսինքն գործում է պարզ հաշվառում՝

Շրջանառության հարկ = Շրջանառություն X դրույքաչափ:

Սակայն Օրենքի տեսքստը գրված է ոչ պարզ, որը հանգեցրել է բազմաթիվ տարընթերցումների և մեկնաբանությունների:

Օրինակ: Նախկինում «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով սահմանված էր, որ այն կազմակերպությունները, որոնց ֆիզիկական անձ հանդիսացող հիմնադիրները կամ մասնակիցները միևնույն ժամանակ ունի նաև այլ կազմակերպությունում 20 տոկոս և ավել փայամասնակցություն, ապա տվյալ 2 կազմակերպությունները համարվում են ԱԱՀ վճարողներ, անկախ իրենց շրջանառության չափից:

Այս դրույթը Շրջանառության հարկի ներդրմամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքից տեղափոխվեց «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդված որոշակի խմբագրումներով: Այս խմբագրումը հանգեցրել է բազմաթիվ տարաձայնությունների ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի և տնտեսվարողների միջև:

Արդյունքում այսօր ունենք մի խումբ հարկատուներ, որոնք իրենց համարել են ԱԱՀ վճարողներ, սակայն ըստ ՊԵԿ-ի պետք է լինեին Շրջանառության հարկ վճարողներ հետևաբար պետք է վճարեն խոշոր տույժեր, տուգանքներ: Ընդ որում հարկ վճարողները դժգոհում էին, որ Շրջանառության հարկի ներդրման փուլում ՊԵԿ-ն իր իրազեկումներում ոչինչ այս դրույթի մասին չի հիշատակել ոչ օրենքի հիմնավորումներում, ոչ էլ հարկատուների հետ հանդիպման ընթացքում:

Շրջանառության հարկի դրույքաչափը

Մարզային այցերի արդյունքում պարզ դարձավ, որ Շրջանառության հարկի ներդրմամբ շրջանառության նկատմամբ հարկը միջինում բարձրացել է 0,3 տոկոսով, սակայն մանրածախ առևտրով զբաղվող հարկ վճարողների շրջանառության նկատմամբ հարկի դրույքաչափը բարձրացել է մոտավորապես 1 տոկոսով, ինչը հավասար է հաշվարկված հարկային բեռի **45 տոկոսով** բարձրացմանը: Եթե նախկինում՝ 2012թ-ին հարկատուի կողմից հաշվարկված հարկը կազմում էր շրջանառության 2-ից 2,4 տոկոսը, ապա այժմ, գործող օրենքով շրջանառության 3,5 տոկոսը:

2012թ-ի նոյեմբեր ամսին ՓՄՁ զարգացման խորհրդի նիստում դեռևս օրենքի նախագծային փուլում 3,5 տոկոս դրույքաչափի հիմնավորման շուրջ բարձրացված հարցին հիմնավոր պատասխան չտրվեց, ինչի արդյունքում հարկ վճարողները չեն հասկանում, թե ինչպես է առաջացել այդ տոկոսադրույքը:

Մինչդեռ համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից տրամադրված տեղեկանքի 2011թ-ի արդյունքներով մինչև 58,35 մլն շրջանառություն ունեցող հարկատուների կողմից վճարված հարկը կազմում էր շրջանառության նկատմամբ հաշվարկված 2,4 տոկոսը:

Մարզային հանդիպումների արդյունքում ֆոկուս խմբերի կողմից լրացված անանուն հարցաթերրիկները նույնպես ցույց էին տալիս այն տվյալը, որ նախորդ տարիներին մասնավորապես առևտրի ոլորտի հարկատուների վճարված հարկը կազմել է շրջանառության 2-ից 2,4 տոկոսը:

2013թ-ի 1-ին կիսամյակի արդյունքներով Շրջանառության հարկի գծով պետական բյուջե է մուտքագրվել 5,1 մլրդ դրամ, որից 3,7 մլրդ դրամը գոյացել է առևտրակաան գործունեությունից վճարված շրջանառության հարկից:

Միևնույն ժամանակահատվածում ընդհանուր հարկային եկամուտների՝ 467,7 մլրդ, մեջ այլ գործունեությունից շրջանառության հարկը կազմում է 0,3 տոկոսը, իսկ առևտրի ոլորտից մուտքագրված հարկը 0,8 տոկոսը:



Շրջանառության հարկ վճարողները ըստ 1-ին կիսամյակի կազմում են 50144 հարկատուներ, որոնցից մոտ 32000 առևտրի ոլորտի հարկատուներն են:

Այս ամբողջն ուղղակիորեն նպաստել է ոլորտում զբաղված տնտեսվարողների քանակի նվազմանը, որի արդյունքում 2013 թվականի ընթացքում 2012 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ մանրածախ առևտրով զբաղվող խանութների քանակը 18 %-ով նվազել է:

Հավելված

ՀՀ մարզերում հարկ վճարողների կողմից

հարկային մարմինների վերաբերյալ ներկայացված դժգոհությունները

1. Հարկերի հավաքագրման պարտադրումներ.

   1.1 Հարկային մարմինների աշխատակիցները յուրաքանչյուր ամսվա 20-ից մինչև 30-ը զանգերով, այցելություններով, անհիմն կանչերով հարկային տեսչություններ հարկատուի գլխին են բարդում իրենց պատմությունները հարկերի հավաքագրման պլանի մասին: Պահանջում են, երբեմն խնդրում են՝ պատճառաբանելով, որ իրենց աշխատանքից կհեռացնեն, վճարել որոշակի թվերով պայմանավորված հարկեր մինչև ամսվա վերջ: Ընդ որում նույնը տարածվում է նաև Շրջանառության հարկ վճարողների վրա, անկախ այն հանգամանքից, որ հարկը պետք է հաշվարկվի և վճարվի ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ:

   1.2 Մարզերում շատ են դեպքերը, երբ իրականում Գերփոքր հարկատուի վճարվելիք գումարն այնքան չէ ինչքան պահանջում է հարկային տեսուչը, արդյունքում հարկատուն վճարում է տեսուչի պահանջած գումարը, իսկ հետագայում հետ հաշվարկով ներկայացնում վճարված հարկին համապատասխան հաշվարկ, որն էականորեն տարբերվում է հարկատուի իրական շրջանառությունից:

   1.3 Բազմաթիվ են դեպքերը, երբ հարկատուներին «Հրավիրում» են հարկային տեսչություններ և հոգեբանական ճնշումներ գործադրելով հարկատուից իրենց պահանջած գումարը վճարելու խոստում են կորզում:

2. Հղիության նպաստի հսկողության «ընթացակարգը».

   2.1 Գործատուները վճարելով աշխատակցին հղիության հպաստ, սահմանված կարգով կազմում են համապատասխան փաստաթղթերի փաթեթն ու ներկայացնում իրենց տարածքային հարկային տեսչություն: Հարկային տեսչությյունների իրավաբանական բաժնի աշխատակիցները համարյա թե անխտիր բոլոր դեպքերում, փաստի արժանահավատությունը ստուգելու նպատակով գործը ուղարկում են ՊԵԿ-ի հետաքնչական բաժին: Հետաքննիչը իր մոտ է հրավիրում թե գործատուին, թե հաշվապահին, թե հղիության նպաստ ստացած

աշխատակցին, անկախ այն փաստից թե Երևանից ինչհեռավորության վրա են գտնվում: Պետք է գան ներկայանան, գրեն բացատրություններ և այլն: Այնուհետև գործը գնում է դատախազություն, իսկ հետո մարզային ոստիկանության հետաքննիչն է սկսկում նույն գործողությունները կատարել: Դեպքեր կան, երբ մարզային հետաքննիչը հղիության և ծննդաբերության փաստի արժանահավատությունը ստուգելու նպատակով երեկոյան ժամին «ներխուժել» է նորածնի մոր բնակարան բացատրություններ վերցնելու նպատակով:

2.2 Բազմաթիվ են դեպքերը, երբ ՊԵԿ հետաքննիչը համոզում - վախեցնում է հետ վերցնելու գործատուի դիմումը, հակառակ դեպքում կսկսեն ստուգում:

3. Հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության ստուգում.

3.1 Հարկատուների մոտ արդեն պարտադիր պայման է դարձել տարին մեկ անգամ ՀԴՄ կիրառման ԱԿՏ գրելը;

3.2 Մարզերում հարկային տեսուչներն այլևս հսկիչ գնում չեն կատարում խախտումն արձանագրելու համար, այլ պարզագույն «շուկայական» զրույցի վրա հիմնված կազմվում են ՀԴՄ ԱԿՏ-երը:

4. Տեղեկանքների տրամադրումն ու դիմումների ընդունումը.

4.1 Եթե հարկատուն ընթացիկ պարտավորություն ունի և նրան անհրաժեշտ է որևէ տեղեկանք հարկային մարմիններից, նույնիսկ բանկ ներկայացնելու համար պարտք ու պահանջի մասին տեղեկանք, ապա չգիտես ինչ ներքին հրահանքգներով առաջնորդվելով հարկային մարմինները մերժում են տեղեկանքներ տրամադրելուց քանի դեռ վճարված չի հարկը;

4.2 Նույն պատկերն է, երբ հարկատուն դիմում է հարկային տեսչություն, ասենք բանկային հաշիվ բացելու ստորագրության նմուշ հաստատելու, կամ ՀԴՄ մեքենա գրանցելու կամ գրանցումից հանելու, այդ պահին առկա հարկային պարտավորությունը պետք է զրոյացվի, որպեսզի տեսչության սպասարկման սրահի աշխատակիցը լսի հարկատուի խնդիրը: